

2021-2022 ուսումնական տարում Տավուշի մարզի **2-**րդ դասարանում սովորողների ուսումնառության արդյունքների ոչ միավորային գնահատման՝ բնութագրերի ձևանմուշների վերաբերյալ

Նախաբան

Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանվել է, որ **1-4-**րդ դասարաններում և **5-**րդ դասարանի **1-**ին կիսամյակում իրականացվելու է ոչ միավորային գնահատում, իսկ սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման նոր կարգի համաձայն՝ յուրաքանչյուր սովորողի համար որպես կիսամյակի ամփոփում կազմվելու է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

Տավուշի մարզի փորձարկող **2-**րդ դասարանի ուսուցչանով նախատեսված բոլոր առարկաների վերջնարդյունքների հիման վրա կազմվել են բնութագրերի հնգաստիճան սանդղակներ՝ որպես օգնություն ուսուցչին:

Ցուրաքանչյուր աղյուսակի առաջին սյունակում տրված են տվյալ առարկայի ուսումնական ծրագրով սահմանված թեմաները (**ԵՇԱ, Շախմատ, Մաթեմատիկա և այլն**) կամ առարկայական չափորոշչով նախատեսված հիմնական հասկացություններն ու ենթահասկացությունները (օր.՝ **Մայրենի**), իսկ աղյուսակի առաջին տողում ներկայացված են **Ա, Բ, Գ, Դ, Ե** սյունակները՝ ցույց տալով առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների կատարման աստիճանը **1-**ին կիսամյակի համար՝ նվազման կարգով:

Ամեն առարկայի ուսուցիչ կարող է կազմել յուրաքանչյուր սովորողի բնութագիրը՝ հաշվի առնելով հետևյալ սկզբունքները.

- Պետք է շարժվել վերևից ներքև և հորիզոնական՝ գնալով ձախից աջ (**Ա-Ե**):
- Կարելի է ընտրել որևէ սյունակի նկարագրությունը ամբողջությամբ կամ համադրել հատվածներ տարբեր ձևակերպումներից, քանի որ նույն վերջնարդյունքի կատարման մակարդակների բաժանումը պայմանական է:
- Պետք է խուսափել մակարդակների բաժանել երեխաներին, քանի որ բիչ հավանական է, որ որևէ սովորող բոլոր վերջնարդյունքների մասով կապահովի նույն մակարդակը:
- Ձի կարելի սյունակները համեմատել կամ նույնացնել միավորների (**5-**միավորային համակարգի կամ **10-**միավորային համակարգի աստիճանների հետ):
- Բոլոր բնութագրերը կազմվել են դրական շեշտադրմամբ. պետք է բացառել «**Ձի կարողանում**», «**Ձգիտի**», «**Դժվարանում է**» արտահայտությունները:
- Ուսուցիչը կարող է ըստ անհրաժեշտության խմբագրել կամ լրամշակել ձևակերպումները՝ առավել հարմարեցնելով դրանք տվյալ սովորողի ցուցաբերած արդյունքին:
- Բնութագիրը պետք է կցել սովորողի անձնական գործին:

Ցուցումներ բնութագրերի կազմման վերաբերյալ

Ներկայացված աղյուսակների **Ա** սյունակում ներկայացված են առարկայի առաջին կիսամյակին ուսուցնվող թեմաների վերջնարդյունքները՝ ձևակերպված բնութագրի ձևով: Սյունակը ներկայացնում է վերջնարդյունքների ապահովման առավելագույն աստիճանը: Հաջորդ սյունակները ներկայացնում են յուրաքանչյուր վերջնարդյունքի ապահովման տարբեր աստիճանները նվազման կարգով: Վերջին՝ **Ե** սյունակում ներկայացված է վերջնարդյունքի ապահովման նվազագույն աստիճանը:

Ուսուցիչը կարող է յուրաքանչյուր սյունակի բնութագրերին ծանոթանալով՝ ընտրել յուրաքանչյուր երեխայի համար այն ձևակերպումները, որոնք առավելագույն համապատասխանում են նրա ուսումնառության արդյունքներին կիսամյակի ավարտին: Այս աշխատանքը կատարելիս ուսուցիչը պետք է հիմնվի ողջ կիսամյակի ընթացքում կիրառած ձևավորող գնահատման արդյունքների (ստուգաթերթերի, համառոտ գրառումների, ռուբրիկների, դիտարկումների, հայտորոշիչ առաջադրանքների և այլ գործիքների պարբերական կիրառման վերլուծությունների վրա):

Բնութագրերը կարող են կազմվել տարբեր սյունակների բնութագրումներից ընտրված նկարագրություններից՝ ամբողջացնելով սովորողի ամփոփ բնութագիրը տվյալ առարկայից: Նույն տողից միայն մեկ բնութագրիչ կարող է ներառվել կոնկրետ սովորողի բնութագրի մեջ, քանի որ յուրաքանչյուր տողում նկարագրված են նույն վերջնարդյունքի ապահովման տարբեր աստիճանները: Ձի բացառվում, որ սյունակներից մեկի բնութագրումները լիովին համընկնեն կոնկրետ սովորողի առաջադիմության արդյունքներին, սակայն առավել հաճախ դա կլինի տարբեր սյունակներից առանձնացված բնութագրիչներից կազմված խճանկար

«Մաթեմատիկա» առարկայի կիսամյակային ամփոփուիչ բնութագրի ձևանմուշ

Կազմեց Վարսենիկ Հովսեփյանը

1-ին կիսամյակ. քեմաներ	Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.
1. Երկնիշ թվեր	Վարժ հաշվում է 2-ական (4, 6, 8...), 5-ական (15, 20, 25), 10-ական (80, 70, 60,...) 100-ի ստեղծում: Հասկանում է հաշվման օրինաչափությունը:	Հաշվում է 2-ական, 5-ական, 10-ական:	Հստ տրված օրինակի հաշվում է 2-ական, 5-ական, 10-ական:	Օգնությամբ հաշվում է 2-ական, 5-կան, 10-ական:	Օգնությամբ և առարկաների միջոցով հաշվում է 2-ական՝ 2-ից մինչև 10-ը և կլոր տասնյակներով:
	Կոստում և շարունակում է պարզ օրինաչափություններ և կարողանում է կազմել նմանատիպ օրինակներ:	Կոստում և շարունակում է պարզ օրինաչափություններ:	Հստ տրված օրինակի կոստում և շարունակում է օրինաչափությունը՝ ավելացնելով 1-ից 2 թիվ:	Օգնությամբ կարողանում է շարունակել օրինաչափությունը՝ ավելացնելով ևս մեկ թիվ:	
	Ճանաչում, կարդում և գրում է երկնիշ և եռանիշ թվերը, ներկայացնում կարգային գումարելիների գումարի տեսքով:	Ճանաչում և կարդում է երկնիշ թվերը, ըստ տրված պահանջի ներկայացնում կարգային գումարելիների գումարի տեսքով:	Ճանաչում և կարդում է երկնիշ թվերը և ըստ տրված օրինակի ներկայացնում կարգային գումարելիների գումարի տեսքով:	Ճանաչում և կարդում է երկնիշ թվերը և օգնությամբ ներկայացնում կարգային գումարելիների գումարի տեսքով:	Օգնությամբ Ճանաչում է երկնիշ թվերը: Կարողանում է գրել և կարդալ:
	Համեմատում է թվերը հարյուրի ստեղծում, դասավորում աճման և նվազման կարգով, և ըստ պահանջի	Համեմատում է թվերը հարյուրի ստեղծում, դասավորում աճման և նվազման կարգով, և ըստ տրված օրինակի	Համեմատում է թվերը հարյուրի ստեղծում, դասավորում աճման և նվազման կարգով և օգնությամբ	Համեմատում է թվերը հարյուրի ստեղծում, օգնությամբ դասավորում աճման և նվազման կարգով:	Օգնությամբ կարողանում է համեմատել երկնիշ թվերը: Կարողանում է կլոր տասնյակները

	մոտարկում է երկնիւ թվերը մինչև մոտակա տասնյակը:	մոտարկում է երկնիւ թվերը մինչև մոտակա տասնյակը:	մոտարկում է երկնիւ թվերը մինչև մոտակա տասնյակը:		դասավորել ըստ նվազման և աճման կարգով:
	100–ի սահմանում կարողանում է վարժ կատարել հանում և գումարում ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր:	100–ի սահմանում կարողանում է կատարել հանում և գումարում ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր:	100–ի սահմանում կարողանում է կատարել հանում և գումարում գրավոր եղանակով, բանավոր՝ առանց կարգային անցումների:	Կարողանում է 100–ի սահմանում օգնությամբ կատարել գումարում, հանում առանց կարգային անցումների և՛ գրավոր և՛ բանավոր տարբերակով:	Օգնությամբ կարողանում է կլոր տասնյակները գումարել գրավոր եղանակով:
	Հասկանալով կիրառում է գումարման տեղափոխական և գուգորդական օրենքները:	Կիրառում է գումարման տեղափոխական օրենքը, ըստ տրված պահանջի կիրառում գուգորդական օրենքը:	Ըստ տրված օրինակի կիրառում է գումարման տեղափոխական օրենքը:	Օգնությամբ կիրառում է գումարման տեղափոխական օրենքը:	
	Գտնում է թվաբանական գործողություններ ի անհայտ բաղադրիչները, գիտակցում գործողություններ ի միջև եղած կապը:	Գտնում է թվաբանական գործողություններ ի անհայտ բաղադրիչները:	Ըստ տրված օրինակի գտնում է թվաբանական գործողությունների անհայտ բաղադրիչները:	Օգնությամբ կարողանում է գտնել թվաբանական գործողություններ ի անհայտ բաղադրիչները:	Օգնությամբ կարողանում է գտնել թվաբանական գործողություններ ի անհայտ բաղադրիչները 1–10 թվերի սահմանում:
	Հասկանում է տեխստային խնդրի բովանդակությունը : Առանձնացնում է պայմանը պահանջից: Կարողանում է կատարել խնդրի կարճ գրառում և մոդելավորում: Կազմում և լուծում է մեկ կամ երկու գործողությամբ խնդիրներ՝	Հասկանում է տեխստային խնդրի բովանդակությունը : Առանձնացնում է պայմանը պահանջից: Լուծում է մեկ կամ երկու գործողությամբ խնդիրներ՝ կիրառելով տարբեր թվաբանական գործողություններ	Օգնությամբ հասկանում է տեխստային խնդրի բովանդակությունը և առանձնացնում պայմանը պահանջից: Ինքնուրույն լուծում է մեկ գործողությամբ խնդիրներ (...–ով ավելի/ պակաս և այլն):	Օգնությամբ հասկանում է տեխստային խնդրի բովանդակությունը և լուծում մեկ գործողությամբ խնդիրներ (...–ով ավելի/ պակաս և այլն):	Պատկերավորման միջոցով և օգնությամբ լուծում է պարզ խնդիրներ մինչև տասը թվի սահմանում:

	կիրառելով տարբեր քվադրանտներ գործողություններ (...-ով ավելի/ պակաս և այլն):	ը (...-ով ավելի/ պակաս և այլն):			
2.Բազմապատկում , բաժանում	Հասկանում է բազմապատկման և բաժանման գործողություններ ի իմաստը: Հավասար քվերի գումարը կարողանում է ներկայացնել արտադրյալով և հակառակը: Գիտի բազմապատկման և բաժանման բաղադրիչների անվանումները:	Գիտի բազմապատկման և բաժանման գործողություններ ի իմաստը: Հավասար քվերի գումարը կարողանում է ներկայացնել արտադրյալով և հակառակը: Գիտի բազմապատկման և բաժանման բաղադրիչների անվանումները:	Հստ տրված օրինակի ըմբռնում է բազմապատկման և բաժանման գործողություններ ի իմաստը, և հավասար քվերի գումարը ներկայացնում է արտադրյալի տեսքով:	Օգնությամբ հասկանում է բազմապատկման և բաժանման իմաստը:	Օգնությամբ հանչում է բազմապատկման և բաժանման նշանները:
	Վարժ գիտի 1-5 քվերի բազմապատկման աղյուսակը և համապատասխան բաժանման դեպքերը, 0-ի և 1-ի հատկությունները բազմապատկման և բաժանման գործողություններում:	Գիտի 1-5 քվերի բազմապատկման աղյուսակը և համապատասխան բաժանման դեպքերը: Գիտի 0-ի և 1-ի հատկությունները բազմապատկում կատարելիս և 1-ի հատկությունները բաժանում կատարելիս:	Գիտի 1-3 քվերի բազմապատկման աղյուսակը:	Մասամբ է տիրապետում 1-2 քվերի բազմապատկման աղյուսակին:	Օգնությամբ կարողանում է ասել 1-2 քվերի բազմապատկման աղյուսակը:
	Կարողանում է գտնել բազմապատկման և բաժանման անհայտ բաղադրիչը, հասկանում է հայտնի և անհայտ բաղադրիչների միջև եղած կապերը:	Կարողանում է գտնել բազմապատկման և բաժանման անհայտ բաղադրիչը:	Հստ տրված օրինակի կարողանում է գտնել բազմապատկման և բաժանման անհայտ բաղադրիչը:	Օգնությամբ կարողանում է գտնել բազմապատկման և բաժանման անհայտ բաղադրիչը:	

	Կարողանում է լուծել և կազմել մեկ կամ երկու գործողությամբ խնդիրներ՝ կիրառելով տարբեր թվաբանական գործողություններ (...–անգամ ավելի/պակաս և այլն):	Կարողանում է լուծել մեկ գործողությամբ խնդիրներ՝ նիշտ ընտրելով թվաբանական գործողությունը (...–անգամ ավելի/պակաս և այլն):	Կարողանում է արտադրյալը/ֆանո րդը գտնելու վերաբերյալ մեկ ֆայլով խնդիր լուծել:	Օգնությամբ կարողանում է արտադրյալը/ֆանո րդը գտնելու վերաբերյալ մեկ ֆայլով խնդիր լուծել:	Պատկերավորան միջոցով և օգնությամբ մինչև 1-10 թվերի սահմանում կարողանում է արտադրյալը կամ ֆանորդը գտնելու վերաբերյալ մեկ ֆայլանի խնդիր լուծել:
--	--	---	---	---	--